Կարգապահական գործ թիվ ԿԳ-26158

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՍԵՆ ԵՐՎԱՆԴԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Արաքս Վարդանյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ դիմող Սուսաննա Հողմրցյանի և դիմողի ներկայացուցիչ Կարլեն Հարությունյանի,

քննության առնելով փաստաբան Արսեն Երվանդի Դանիելյանին (արտոնագիր՝ թիվ 950) **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Տ՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Սուսաննա Հողմրցյանը **(այսուհետ նաև՝ Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ նաև՝ Պալատ)**, հայտնել է, որ 2023թ. մայիսի 11-ին պայմանագիր է կնքել «Դանիելյան» փաստաբանական գրասենյակի հետ՝ ի դեմս փաստաբան Արսեն Դանիելյանի **(այսուհետ նաև՝ Փաստաբան)**:

Դիմողը նշել է, որ Փաստաբանի հետ համագործակցությունը կազմակերպվել է Վահագն Դանիելյանի միջոցով, որին վճարել է 1.150 000 /մեկ միլիոն հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ: Փաստաբանը պարտավորվել է ներկայացնել Դիմողի շահերը ժառանգության գործով, մասնավորապես՝ վիճարկել ժառանգության վկայականը և Դիմողին ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ: Սակայն, Դիմողի պնդմամբ, հայցադիմումը ներկայացվել է պայմանագիրը կնքելուց շուրջ 5 ամիս անց, որի ընթացքում Դիմողի եղբայրն ընդունել է ժառանգությունը և ստացել սեփականության վկայական:

Դիմողը նշել է, որ Փաստաբանին տեղեկացրել է գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքների մասին, այդ թվում՝ վեճի առարկա գույքի չափագրումների վերաբերյալ, սակայն վերջինս ողջամիտ ժամկետում չի ձեռնարկել համապատասխան գործողություններ:

Թիվ ԿԳ-26158-2-Ա
22.07.2026թ.

Բացի այդ, Դիմողը նշել է, որ Փաստաբանը չի ընդունել և չի ներկայացրել գործի համար էական ապացույցներ՝ մասնավորապես կոմունալ վճարումների կտրոններ, որոնք կարող էին հաստատել ժառանգությունն ընդունած լինելու հանգամանքը:

2025թ. սեպտեմբերի 26-ին հրապարակված դատական ակտից Դիմողը տեղեկացել է, որ հայցադիմումը մերժվել է, և դատարանը որպես ապացույց դիտարկել է միայն հաշվառման վերաբերյալ տեղեկանքը:

Դիմողը գտնում է, որ Փաստաբանի կողմից կատարված ոչ պատշաճ և թերի աշխատանքի արդյունքում կրել է նյութական վնաս և կանգնած է բնակարանից վտարման վտանգի առաջ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դիմողը խնդրել է Փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 14.05.2026թ. Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 21.05.2026թ. ներկայացրած բացատրությամբ պնդել է նախկինում ներկայացրած դիրքորոշումը և ներկայացրել է ապացույցներ:

11.06.2026թ. Դիմողը կրկին Ներկայացրել է դիմում:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Արսեն Դանիելյանին առաջարկվել է Օրենքի 39.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ներկայացնել բացատրություն Սուսաննա Հողմրցյանի դիմումի վերաբերյալ, սակայն վերջինս որևէ բացատրություն չի ներկայացրել:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 14.05.2026թ. Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն այդպիսիք չեն ներկայացվել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 23.04.2026 թվականի թիվ 288-Ա/ԿԳ-26158 որոշմամբ փաստաբան Արսեն Դանիելյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք)** 3.5.5 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

23.04.2026թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից Շուշան Հարությունյանին (**այսուհետ՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>
Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 23.06.2026թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-7-րդ կետերում նշված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 23.06.2026թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել՝ 22.07.2026թ. ժամը 19:00-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. 11.05.2023 թվականին Սուսաննա Հողմրցյանը և «Դանիելյան» ՍՊԸ-ի տնօրեն՝ Արսեն Դանիելյանը կնքել են փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և «Դանիելյան» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի պատճեով (**այսուհետ նաև՝ Պայմանագիր**):*

2. 10.10.2023թ. Սուսաննա Հողմրցյանի ներկայացուցիչ Արսեն Դանիելյանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Սարգիս Աղասու Հողմրցյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և որպես հետևանք՝ ժառանգության իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին: *Սույն փաստը հաստատվում է հայցադիմումի պատճեով և «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

3. Հայցադիմումում փաստաբանի կողմից նշվել է հետևյալը. *«Դատարանին հայտնում եմ, որ Հայցվորը հանգուցյալ Աղասի Պողոսի Հողմրցյանի մահից հետո մինչ օրս, փաստացի տիրապետում և օգտագործում է վերը նշված անշարժ գույքերը, որպես սեփական գույք, կատարել է գույքի պահպանման և այն երրորդ անձանց ոտնձգություններից պաշտպանելուն ուղղված գործողություններ, **ինչպես նաև կատարել է կոմունալ վճարումները:** Կատարել է ծնողների հուղարկավորության բոլոր ծախսերը: Սույն փաստը հաստատվում է հայցադիմումով, ինչպես նաև «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

4. Փաստաբանի կողմից ներկայացված հայցադիմումը ստացել է ԵԴ2/33050/02/23 համարը և ընդունվել է վարույթ: *Սույն փաստը հաստատվում «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

5. 26.09.2025թ. Դատարանը մերժել է Սուսաննա Հողմրցյանի հայցը՝ արձանագրելով, որ ներկայացված հայտարարություններում և վկաների ցուցմունքներում

առկա էական հակասությունների պատճառով դրանցով չի կարող հաստատվել Հայցվորի կողմից վեճի առարկա անշարժ գույքը փաստացի տիրապետելու կամ կառավարելու հանգամանքը, իսկ միայն վիճելի հասցեում հաշվառված լինելը բավարար չէ փաստացի տիրապետումը հաստատելու համար: Դատարանը եզրահանգել է, որ Հայցվորը չի ապացուցել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հոր ժառանգությունը փաստացի տիրապետմամբ ընդունելու հանգամանքը և պետք է կրի այդ փաստն ապացուցված չլինելու բացասական դատավարական հետևանքները: *Սույն փաստը հաստատվում է 26.09.2025թ. վճռի պատճենով:*

6. Թիվ ԵԴ2/33050/02/23 քաղաքացիական գործով վերաքննիչ քաղաքացիական դատարանը նշել է հետևյալը. «Տվյալ դեպքում բողոքաբերը որպես նոր ապացույցները Դատարանին ներկայացնելու անհնարինություն նշել է այն հանգամանքը, որ դա չի կատարել իր փաստաբանը, այսինքն՝ ըստ էության բողոքաբերը նոր ապացույցները չներկայացնելը պայմանավորել է իր ներկայացուցչի անգործության հետ, մինչդեռ այդ հանգամանքը չի կարող դիտարկվել որպես բողոքաբերի կամքից անկախ հանգամանքներում չներկայացված, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ներկայացուցչի կատարած դատավարական գործողությունները գործին մասնակցող անձի համար նույնքան պարտադիր են, որքան այն դեպքերում, երբ գործին մասնակցող անձն ինքը դրանք կատարեր: Հետևաբար ստացվում է, որ ներկայացված ապացույցներ չեն կարող հիմք ընդունվել, ուստիև նշվածի կապակցությամբ իրավաչափ են վերաքննիչ բողոքի պատասխանում նշված փաստարկները:»: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում հրապարակված ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.07.2026թ. որոշմամբ:*

7. Կարգապահական գործի քննության ընթացքում Դիմողը հայտնել է, որ կոմունալ ծառայությունների վճարումները հաստատող անդորրագրերը ցանկացել է տրամադրել Փաստաբանին, սակայն վերջինս հայտնել է, որ դրանք ներկայացնելու անհրաժեշտություն չկա: *Սույն փաստը Դիմողի կողմից նման բացատրություն ներկայացնելու մասով, հաստատվում է կարգապահական նիստի ձայնագրությամբ:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Արսեն Դանիելյանը փաստաբան է հանդիսանում 24.10.2009 թվականից, և 2021-2026 թվականների ընթացքում Փաստաբանն ունեցել է մեկ կարգապահական տույժ (տույժը մարված է):

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Արսեն Դանիելյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.5.5 ենթակետի խախտման համար:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և*

օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Կանոնագրքի 2.7.1-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանական գործունեության հասարակական-իրավական նշանակությունը փաստաբանից պահանջում է բարձր մասնագիտական պատրաստվածություն, օրենսդրության իմացություն և գործնական փորձ, փաստաբանական գործունեության մարտավարության մեթոդների և միջոցների, ինչպես նաև հռետորական արվեստի տիրապետում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են որոշակի պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի կարող են արդյունավետ լինել վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Իրենց գործառույթներն իրականացնելիս փաստաբաններն ունեն ոչ միայն իրավունքներ, այլ նաև առանձնահատուկ պարտականություններ և պարտավորություններ իրենց վստահորդների և դատարանների առջև:

ՄԱԿ-ի 1990թ. **«Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ»**-ի մասին փաստաթղթի համաձայն, փաստաբանների պարտականությունների մեջ է մտնում, inter alia, **«իրենց վստահորդներին բոլոր պատշաճ միջոցներով օգնելը, և նրանց շահերը պաշտպանելու ուղղությամբ իրավական գործողություններ ձեռնարկելը»** (կետ 13(բ), իսկ իրենց վստահորդների իրավունքները պաշտպանելիս ու արդարադատության իրականացմանը աջակցելիս պարտավոր են պաշտպանել ազգային և միջազգային իրավունքով պաշտպանված մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, և պետք է մշտապես գործեն ազատորեն և ջանասիրաբար՝ օրենքի և իրավաբանի մասնագիտության ճանաչված սկզբունքների և էթիկական նորմերի համաձայն (կետ 14):

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» 25.10.2000թ.Rec(2000)21 հանձնարարականի համաձայն, **փաստաբանները իրենց վստահորդների առջև պարտավոր են ձեռնարկել իրավական գործողություններ իրենց վստահորդի իրավունքները և շահերը պաշտպանելու, հարգելու և իրացնելու ուղղությամբ** (կետ 3(գ)):

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE-ի)՝ Եվրոպական փաստաբանների վարքագծի կանոնակարգի համաձայն՝ **փաստաբանը պետք է իր վստահորդին խորհրդակցի և նրա շահերը ներկայացնի «արագորեն, բարեխղճորեն և ջանասիրաբար», և փաստաբանը պետք է անձնական պատասխանատվություն վերցնի իր վրա վստահորդի հրահանգները կատարելու ուղղությամբ, և պետք է իր վստահորդին տեղեկացված պահի այն խնդրի զարգացումների մասին, որը նրան վստահվել է** (կետ 3.1.2.):

Հանձնաժողովը չի կարող սահմանել այն անհրաժեշտ գործողությունների ծավալը, որը փաստաբանը պարտավոր է կատարել, քանի որ յուրաքանչյուր գործով կարող է այն տարբեր լինել՝ ելնելով տվյալ գործի առանձնահատկություններից և հանգամանքներից: Սակայն գոյություն ունի գործողությունների որոշակի նվազագույն չափ, որը ողջամիտ, անաչառ դիտորդի տեսանկյունից փաստաբանը պարտավոր է կատարել իր վստահորդի կենսական շահերի և հիմնական իրավունքների պաշտպանության ուղղությամբ, ինչը և կվկայի առնվազն փաստաբանի բարեխղճության առերևույթ առկայության մասին: Այս առումով, փաստաբանի մասնագիտական բարեխղճության չափանիշներ է սահմանում Կանոնագրքի 3.5.5 ենթակետը, որը նախատեսում է փաստաբանի կողմից վստահորդի հանձնարարության բարեխիղճ կատարման հետևյալ պայմանները՝

1. իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն.

2. վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն.

3. հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Իրավունքի համապատասխան ճյուղի իմացությունը նշանակում է բավարար իրազեկվածություն ոչ միայն իրավունքի տվյալ ճյուղի նորմերի և դրանցով կարգավորվող հասարակական հարաբերությունների վերաբերյալ, այլև դրանք համադրելու, վերլուծելու, դրանցում վստահորդի շահերից բխող բացերի իմացություն, մի քանի իրավական լուծումների մեջ վստահորդի շահերին լավագույնս համապատասխանող լուծման ընտրություն և իրավունքի տվյալ ճյուղից բխող պրակտիկայի իմացություն, այդ թվում իրավասու մարմինների կողմից իրավունքի տվյալ ճյուղի նորմերին տրվող գործնական մեկնաբանության և կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ:

Վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրության փաստաբանի պարտականությունը նշանակում է վստահորդի խնդրին առնչվող բոլոր փաստերի ուսումնասիրություն և վերլուծություն:

Հանձնարարությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարման պարտականությունն արդեն վերոնշյալ երկու պարտականություններից ուղղակիորեն հետևող գործողությունների կատարումն է, ինչն ենթադրում է փաստաբանի մոտ վստահորդի խնդրի վերաբերյալ անհրաժեշտ

պատկերացման ձևավորում և իրավունքի համապատասխան ճյուղի շրջանակներում դրա լուծման ուրվագծում, վստահորդի շահերի սպասարկման արդյունավետ ուղիների ու եղանակների կանխատեսում, որի հիման վրա փաստաբանը պարտավոր է ձեռնարկել համապատասխան և համարժեք իրավական և փաստացի միջոցներ, որոնք պետք է լինեն իրական և արդյունավետ, այլ ոչ թե ձևական և պատրանքային:

Հանձնաժողովը, գնահատելով կարգապահական գործում առկա ապացույցները, Դիմողի բացատրությունները, դրանց փոխադարձ համադրությամբ հաստատված փաստական հանգամանքները, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի իրավական գնահատման համար նշանակություն ունեցող բոլոր տվյալները, գալիս է այն եզրահանգման, որ սույն գործով Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներ:

Հանձնաժողովը հաստատված է համարում, որ Փաստաբանը, ստանձնելով Դիմողի շահերի ներկայացուցչությունը, դատարան է ներկայացրել հայց՝ Դիմողին փաստացի տիրապետման եղանակով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջով: Փաստաբանի կողմից կազմված հայցադիմումում, որպես պահանջի փաստական հիմք, ի թիվս այլ հանգամանքների, ուղղակիորեն նշվել է, որ Դիմողը ժառանգատուի մահից հետո փաստացի տիրապետել և օգտագործել է վիճելի անշարժ գույքը, կատարել է դրա պահպանմանն ուղղված գործողություններ, ինչպես նաև կատարել է կոմունալ վճարումներ:

Հետևաբար Փաստաբանի կողմից ընտրված դատական պաշտպանության եղանակի պայմաններում Դիմողի կողմից վիճելի գույքի փաստացի տիրապետման, կառավարման և դրա պահպանմանն ուղղված ծախսերի կատարման հանգամանքները հանդիսացել են ներկայացված պահանջի հիմնավորման համար էական նշանակություն ունեցող փաստեր, որոնց ապացուցման ուղղությամբ Փաստաբանը պարտավոր էր ցուցաբերել անհրաժեշտ գործողություններ:

Կարգապահական գործի քննության ընթացքում Դիմողը հայտնել է, որ իր մոտ առկա կոմունալ ծառայությունների վճարումները հաստատող անդորրագրերը և պայմանագրերը ցանկացել է տրամադրել Փաստաբանին, սակայն վերջինս հայտնել է, որ դրանք անհրաժեշտ չեն: Նշված բացատրությունը Հանձնաժողովը գնահատում է գործում առկա մյուս ապացույցների համակցությամբ: Մասնավորապես, Փաստաբանի կողմից կազմված հայցադիմումում կոմունալ վճարումներ կատարելու հանգամանքը վկայակոչվել է որպես հայցի փաստական հիմք, սակայն այն հաստատելուն ուղղված համապատասխան գրավոր ապացույցները առաջին ատյանի դատարան չեն ներկայացվել:

Միաժամանակ, Դատարանը, մերժելով Դիմողի հայցը, արձանագրել է, որ գործում առկա հայտարարություններում և վկաների ցուցմունքներում առկա են էական հակասություններ, որոնց պայմաններում հնարավոր չի եղել հաստատված համարել Դիմողի կողմից վիճելի գույքը փաստացի տիրապետելու կամ կառավարելու հանգամանքը, և արդյունքում Դիմողը կրել է այդ փաստն ապացուցված չլինելու բացասական դատավարական հետևանքները:

Հանձնաժողովը կարևոր է համարում նաև այն հանգամանքը, որ առաջին ատյանի դատարանում չներկայացված՝ կոմունալ վճարումների, բաժանորդային տվյալների և գույքի պահպանմանն ուղղված վճարումների վերաբերյալ փաստաթղթերը հետագայում

ներկայացվել են վերաքննիչ բողոքին կից: Վերաքննիչ բողոքում նշվել է, որ դրանց բնօրինակները գտնվել են Դիմողի մոտ, դրանց գոյության մասին նախկին ներկայացուցիչը տեղեկացված է եղել, սակայն դրանք սահմանված ժամկետում չեն ներկայացվել դատարան:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, անդրադառնալով նշված ապացույցներին, արձանագրել է, որ դրանց՝ առաջին ատյանի դատարան չներկայացնելը բողոքաբերը պայմանավորել է իր ներկայացուցչի անգործությամբ, սակայն այդ հանգամանքը չի կարող դիտարկվել որպես բողոքաբերի կամքից անկախ հանգամանք, քանի որ ներկայացուցչի կատարած դատավարական գործողությունները ներկայացվող անձի համար առաջացնում են նույն հետևանքները, ինչ նրա կողմից անձամբ կատարված գործողությունները: Այդ պատճառով ներկայացված նոր ապացույցները Վերաքննիչ դատարանը չի ընդունել:

Հանձնաժողովի գնահատման առարկան այն չէ, թե համապատասխան ապացույցների ժամանակին ներկայացման դեպքում Դիմողի հայցը կբավարարվեր, թե ոչ: Էականն այն է, որ Փաստաբանը, հայցի փաստական հիմքում վկայակոչելով տվյալ հանգամանքը, պետք է ուսումնասիրեր այն հաստատող՝ Դիմողի մոտ առկա ապացույցները, գնահատեր դրանց նշանակությունը և անհրաժեշտության դեպքում ժամանակին ներկայացներ դատարան:

Այս տեսանկյունից Հանձնաժողովը գտնում է, որ այն պայմաններում, երբ Փաստաբանը հայցի հիմքում ինքն է դրել Դիմողի կողմից վիճելի գույքի պահպանման ծախսեր և կոմունալ վճարումներ կատարելու հանգամանքը, իսկ Դիմողն ունեցել է այդ հանգամանքի հաստատմանն ուղղված փաստաթղթեր և հայտնել է դրանք Փաստաբանին տրամադրելու պատրաստակամության մասին, Փաստաբանը պարտավոր էր առնվազն ուսումնասիրել այդ փաստաթղթերը, գնահատել դրանց վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու ապացուցողական նշանակությունը և, դրանց՝ վստահորդի դիրքորոշման հիմնավորման համար նշանակություն ունենալու դեպքում, սահմանված դատավարական ժամկետում ներկայացնել դատարան:

Ընդ որում, հատկապես այն պայմաններում, երբ Դիմողի պահանջի հիմնավորման համար ներկայացված վկաների ցուցմունքների և հայտարարությունների միջև հետագայում արձանագրվել են էական հակասություններ, գրավոր ապացույցներն ենթակա էին գնահատման մյուս ապացույցների հետ համակցությամբ: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կիրառելի կանոնների վերլուծության շրջանակում Վերաքննիչ դատարանը ևս նշել է, որ յուրաքանչյուր ապացույց գնահատվում է առանձին՝ վերաբերելիության, թույլատրելիության և արժանահավատության, իսկ բոլոր ապացույցներն՝ իրենց համակցության մեջ բավարարության տեսանկյունից:

Հանձնաժողովը նաև հաշվի է առնում, որ Փաստաբանին կարգապահական վարույթի ամբողջ ընթացքում հնարավորություն է տրվել ներկայացնելու իր դիրքորոշումը, այդ թվում՝ պարզաբանելու, թե ինչ պատճառներով չի համարել անհրաժեշտ համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրությունը կամ ներկայացումը, կամ արդյոք դրանց վերաբերյալ իրականացրել է մասնագիտական գնահատում: Փաստաբանը, սակայն, որևէ բացատրություն չի ներկայացրել և չի մասնակցել կարգապահական նիստին: Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանի կողմից բացատրություն չներկայացնելն ինքնին չի կարող դիտարկվել որպես իրեն վերագրվող խախտման ընդունում, սակայն գործում առկա ապացույցների համակցությամբ չի ներկայացվել որևէ տվյալ, որը կվկայեր

համապատասխան ապացույցները չուսումնասիրելու կամ չներկայացնելու մասնագիտական հիմնավորված ընտրության մասին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանը չի կատարել վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար ողջամտորեն անհրաժեշտ գործողություններ, ինչով խախտել է Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 ենթակետի պահանջը:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը</u>.

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

ՀՀ սահմանադրական դատարանը 05.04.2016թ. թիվ ՍԴՈ-1263 որոշմամբ արձանագրել է, որ Սահմանադրությամբ փաստաբանության՝ որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը բարձրացվել է սահմանադրական մակարդակի:

Սույն գործով Հանձնաժողովը, որոշելով Փաստաբանի նկատմամբ կիրառման ենթակա կարգապահական տույժի տեսակը, հաշվի է առնում արձանագրված խախտման բնույթը, դրա հետևանքները և Փաստաբանի մեղքի աստիճանը:

Հանձնաժողովը նկատի է ունենում, որ Փաստաբանը Դիմողի կողմից կոմունալ վճարումներ կատարելու հանգամանքը ներառելով հայցի փաստական հիմքում, դրան էական նշանակություն է տվել ներկայացված պահանջի հիմնավորման համար, սակայն Դիմողի կողմից առաջարկված՝ այդ հանգամանքը հաստատող ապացույցները պատշաճ չի ուսումնասիրել և չի ներկայացրել դատարան: Ընդ որում, Դիմողը կարգապահական նիստում պնդել է, որ Փաստաբանին առաջարկել է հենց ժառանգության ընդունման համար իրավական նշանակություն ունեցող վեցամսյա ժամանակահատվածի կոմունալ վճարումները հաստատող փաստաթղթերը:

Հանձնաժողովը հաշվի է առնում նաև, որ վերը նշված վարքագիծն ունեցել է դատավարական հետևանք. համապատասխան ապացույցներն առաջին ատյանի դատարանում չեն ուսումնասիրվել, իսկ դրանց հետագա ներկայացումը վերաքննության

փուլում չի ընդունվել:

Վերոգրյալ հանգամանքների համակցությամբ Հանձնաժողովը գտնում է, որ «նկատողություն» կարգապահական տույժի կիրառումը բավարար չի արտահայտի արձանագրված խախտման բնույթն ու դրա հետևանքները: Հետևաբար, հաշվի առնելով նաև կարգապահական տույժի՝ կատարված խախտմանը համաչափ լինելու պահանջը, Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ համաչափ և բավարար կարգապահական արձագանք է «խիստ նկատողություն» կարգապահական տույժի կիրառումը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.2-րդ հոդվածի 3-րդ մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի և 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 2-րդ մասի պահանջներով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արսեն Երվանդի Դանիելյանի (արտոնագիր՝ թիվ 950) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն» Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 ենթակետի պահանջների խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-26158-2-Ա
22 հուլիսի 2026թ.
ք.Երևան